Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավաություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

# ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԻՆՍՏՐՈՒԿՑԻԱ

## ԱԿՏԻ ԳՐՔԵՐԻ ՅԵՎ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՏԵ-ՍԱՆՈՒՄԸ ՈՒ ԼՐԱՑՈՒՄԸ ՆՈՐ ՁԵՎԵՐՈՎ

## 1928 Թ.

351.75
Ժ-21

ԲԱԳՈՒ

1928

39 951
51·75
—21
25.04.2013
MAR 2010

# ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԻՆՍՏՐՈՒԿՑԻԱ

## ԱԿՏԻ ԳՐՔԵՐԻ ՅԵՎ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՏԵՍԱՆՈՒՄԸ ՈՒ ԼՐԱՑՈՒՄԸ ՆՈՐ ՁԵՎԵՐՈՎ 1928 Թ.

### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Քաղաքական պարտականություն ունեցող ակտերի գրությունը Ա. Խ. Հ. Մ. հանձնվում ե տեղական ԶԱԳՍ-ին։

ԶԱԳՍ-երի պարտականություններն են.

Ա. Քաղաքական պարտականություն ունեցող հետևյալ ակտերի կատարումը։

13393

1) Ծննդյան գրքերի տանումը.

2) Մահվան գրքերի տանումը.

3) Ամուսնության վերաբերվող գրքերի տանումը.

4) Ամուսնության կապերի խզման գրքերի տանումը.

5) Ազգանունների կամ մականունների փոփոխման գրքերի տանումը.

6) Վորդեգրության գրքերի տանումը.

7) Նույնպես և ցուցակագրել այն դիմումները, վորոնք վերաբերվում են ամուսնությունից դուրս տեղի ունեցած բեղմնավորության։

8) Բառարանների կազմումը ակտի գրքերի համար.

ԾԱՆՈԹ.—Դայրա և շրջանային ԶԱԳՍ-երը չեն տանում ցուցակագրության գրքերը հետևյալ բնույթ ունեցող ազգանունների (մականունների) և անունների փոփոխումը։ Այդ գործերով զբաղվում են ԶԱԳՍ-երը Բագվում։ Բագվի ԶԱԳՍ-երը գտնվում են Մառբաժնի կից Բագխորհրդում։

2. Գյուղխորհուրդները համաձայն դրության տալիս են միայն յերեք տեսակի ցուցակագրություններ. ամուսնացողների, ծնվողների և մահացողների վերաբերյալ։

Բ. Ակտի գրքերի պայմանը։

Գ. Հին մետրիքական կուլտուրական գրքերի վկայականները տրվում ե ցուցակագրություններից։

Типиграфия „III Интернационал", Баку ул. Саратовца-Ефимова, № 37.
Заказ № 2972. Главлит 2991

3. Ակտի գրքերի վկայականները—պիտի հանձնեն սահմանված կանոններին։

4. Քաղաքական պարունակությամբ. ակտերի գրությունը տանվում է 2-ական նմուշներ։ Առաջին նմուշից տրվում է պահպանության համապատասխան տեղական օրգաններին, վորպեսզի նրանք տան հետաքրքրվող անհատներին և հիմնարկություններին, տեղեկագրները և վկայականները մատենագրության ակտերի միջոցով հաստատել, իսկ յերկրորդը վորոշված ժամերին ուղարկվում է պահպանության. կենտրոնական ԶԱԳՍ-րին կից Ժ.Ն.Գ.Կ. նույն նպատակների բնակչության օգտագործելու բնական շարժման ստատիստիկայի համար։

5. Քաղաքական բնույթ ունեցող ակտերը ցուցակագրության առաջին և յերկրորդ նմուշները լցվում են միաժամանակ, սկզբում անհատականները և նրանց կողմերը, հետո (շրջանայինները)։

6. Առաջին և յերկրորդ նմուշներում գրվում է որաթիվը, ամսաթիվը և տարեթիվը մատենագրության.—Առաջին նմուշներում վերոհիշյալները դնվում են վերևի անկյունի բլանգում գրության խոսքերից հետո «ակտի գրությունը . . . . .», իսկ յերկրորդում վերոհիշյալները ցուցադրվում են շտամպներում, վորը գրվում է յերկրորդ նմուշներին հատուկ գրածներում այն է «Տեղ կնիքի համար»։

ԾԱՆՈԹ. Անկյունների շտամպերի ձևը կնքով է հաստատվում։

7. Բոլոր տեղերը, ինչպես և առաջին, այնպես էլ յերկրորդ նմուշներում վերևի աջակողմյան անկյունում գրվում է ըստ կարգի գրության համար։ Համարացումը պատվում է ամեն տեսակի ակտերի համար և նա պիտի լինի հաջորդական և անընդհատ ամբողջ տարվա ընթացքում։

ԾԱՆՈԹ. Անհրաժեշտ է, վոր բոլոր ծննդյան և մահացման ակտերը մտցրվեն այն տարվա գրքերը, վորտեղ տեղի է ունեցել տըվյալ դեպքերը, այն ժամանակ էլ համարացումը պիտի շարունակվի։

8. Ծննդյան և մահացման վերաբերյալ գրքերում, բացի ընդհանուր հերթական համարի, տրվում է հատուկ հերթական համար առանձին. իգական և արական սեռի համար։

9. Գրությունները ակտի գրքերում լրացվում են (մտցըրվում են) պարզ, հասկանալի ծրագրով, անպայման թանաքով և վոչ մատիտով։



10. Կրճատ և ցնցված բառեր ակտի գրքերում—անթույլատրելի չե։

11. Բոլոր ուղղումները և հավելված լրացուցիչ գրություններըը չի թույլատրվում առանց հատուկ հակաբացատրումների, վորոնք պիտի արվեն առանձին տողերում։

12. Յուրաքանչյուր մի ակտ, մտցրված ակտի գրքերը, պիտի լինի ստորագրված պատասխանատու գործադիր անհատով խուլյն և եթ այն ԶԱԳՍ-երում, վորտեղ կազմը բաղկացած է մի քանի ծառայողներից, պահանջվում է յերկու անհատների ստորագրություն. ԶԱԳՍ-ի վարիչի և գործավարի կամ մատենապետի։

13. Յուրաքանչյուր ամսից հետո—յերկրորդ նմուշները ակտի գրքերը պոկվում են ըստ գրքի ցուցմունքների և հավաքը ուղարկվում է ծրարով կենտ. ԶԱԳՍ-ի կից ԺՆԳԿ-ին. ստատիկ վերամշակման համար, իսկ տեսրները և պահեստները ուղարկվում են Կենտր. ԶԱԳՍ-ին ԺՆԳԿ-ի արխիվը։

14. Յերկրորդ նմուշների գրության ուղարկումը կատարվում է բոլոր օրգանների առաջարկությամբ ԶԱԳՍ-ի և կենտրոնական ԶԱԳՍ-ի, Ու.ԶԱԳՍ-ների վրայով։

## II. ԱՅԴ ԳՐՔԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ ԾՆՆԴԵԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.

15. Առաջին տողում—ցուցադրվում է յերեխայի ազգանունը.

16. Յերկրորդ տողում—ցուցադրվում է յերեխայի անունը։

17. Յերրորդ տողում—գրվում է ծննդյան որաթիվը, ամսաթիվը և տարեթիվը։

18. Չորրորդ տողում դրվում է ծննդավայրը, այսինքն, քաղաքի, գյուղի, շրջանավայրի, նահանգի անունները։

19. Հինգերրորդ տողում ընդգծվում է նորածնի սեռը։ Հինգերրորդ տողում ընդգծվում է նույնպես և հետևյալ բառերը. «Ոչ», «յերկու» և «յերեք» կախված այն հանգամանքների հետ, թե, արդյոք, ծնվողը մեկն է, յերկուսը թե յերեքը։

20. Վեցերորդ տողում մտցրվում են անունը, հոր անունը և ազգանունը ծնողների։

ԾԱՆՈԹ. Այն դեպքում յերբ, մայրը մերժում է ցույց տալ յերեխայի հորը, այն ժամանակ հոր մասին տեղեկություններ չեն մտցնվում, իսկ հատուկ տողում, առանձին նշանը կատարվում է, տալով վորոշ ցուցմունքներ, վոր մայրը մերժում է անվանել երեխայի հորը։

21. 7, 8 և 9 տողերում ընդգծվում է ազգությունը և սոցիալական դրությունը ծնողների, վկաների խոսքերից։ Այն ժամանակ, յերբ պատասխանը անսպասելի է, այդպիսի դեպքերում 7 և 9 տողերում գրվում են լրացուցիչ բառեր. օրինակ—պաշտումանքի ծառայող և այլն։

22. 10 տողում ցուցադրվում է ծնողների ճիշտ հասցեն, այսինքն, բնակչության մշտական վայրը։

23. 11 տողում դիտողություն են արվում ծնողների բազմաքաղաքացիության մասին, յերեխայի քաղաքացիության մասին, յերեխայի ծննդավայրի մասին, այն դեպքում, յեթե մայրը հրաժարվում է անվանել հորը, յերեխայի դաստիարակների ազգանունների մասին, ծնողների բացակայության դեպքում (ընկեցեալ մանուկների ցուցակագրության ժամանակ) մեռած յերեխայի ծնվելու մասին և այլն։

24. Տողում լրացվում է ազգանունը և հայտարարողի հասցեն։

25. Տանը յերեք յերրորդ տողում լրացվում է հայտարողի ստորագրությունը.

26. 14 տողում նշանակվում են վկայաթղթերի մասին (վորոշելով, թե, արդյոք գերբովի հավաքածուի համար վճարված է, թե դրանցից ազատված է) որտեղ ժողովրդական դատարանի վորոշումն է ցույց տված ազգանունի կամ անվան փոփոխութեան և վորդեգրելու մասին և այլն։ Այսինքն, այն բոլոր փոփոխությունները վորոնք, առաջ են յեկել տվյալ գործարքի գրի առնվելուց հետո։

## III. ԱԿՏԻ ԳՐՔԵՐԻ ԼՐԱՑՈՒՄՆ ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

27. Առաջին տողում ցուցադրվում է անունը և հոր անունը մահացողի։

28. 2 և 2ա տողում ցուցադրվում է անունը և հոր անունը մահացողի։

29. 3 տողում նշանակվում է ծննդյան ժամանակը ննջեցյալի, այսինքն, տարեթիվը, ամսաթիվը և օրաթիվը։

ԾԱՆՈԹ. Յեթե այդ տեղեկությունները չի լինում, ցուցադրվում է ննեջեցիալի տարիքը։

30. 4 տողում ցուցագրվում է տարիքը, ամսաթիվը, օրաթիվը մեռնողի և նույնպես մահվան պատճառը։ Մահվան պատճառը մտցնում են բժշկական տեղեկագրի հիման վրա, վոր տրվում է բժշկի կամ համապատասխան հիմնարկության կողմից։



ԾԱՆՈԹ. Գյուղական վայրերում մահվան բնական յառաջացման աթիվ կասկած չլինելու դեպքում ցուցակագրությունը կատարվում է առանց հիշյալ վկայականները ներկայացնելու։ Յեթե ՁԱԳՍ-ում պաշտոնարար անձնավորության յայտնի է յայտարարումը և մահվան փաստը։ Հակառակ դեպքում, ներկայացնվում է տեղեկագիր, տված գյուղխորհրդի կողմից կամ մահը հաստատող վկայական, վորևե ակտի մի ցուցմունքով (հայտարարողից բացի)։

31. 5, 6, 7, 8 և 9 տողերում ընդգծվում է մեռածի սեռը, ընտանեկան դրությունը, ազգությունը և սոցիալական դրությունը, բացի դրանից 9ա տողում բացատրվում է արհեստի կամ թե չէ ծառայության անունը։

32. 10 տողում մտցրվում է մեռածի ճիշտ հասցեն, այսինքն, այն տեղը, վորտեղ ապրել է վերջին ժամանակ ննջեցյալը, օրինակ (հիվանդանոցում, տանը և այլն)։

ԾԱՆՈԹ. Նման դեպքերում, յերբ հիվանդը մահանում է ճանապարհին կամ ուրիշ քաղաքում, մի խոսքով, մշտական բնակչությունից դուրս, այդ դեպքում առանձին նշաններ տողում պիտի ցույց տալ ննջեցիալի մշտական տեղը։

33. 11 տողում մտցրվում են վորոշ նշաններ նրա մասին, թե արձանագրությունը արված է ժողով. դատարանի վորոշման հիման վրա, վորոնք ներկայացնում են մահվան ցուցակագրության ժամանակ, այն է, վկայական հիվանդանոցից կամ վկայական բժշկից, իրենց համարներով։

34. 12 և 13-րդ տողերը լրացվում են ըստ դրված հարցերի։

35. 14 տողում անվում են նշաններ, տեղագիրներ տալու համար, ցուցադրելով վճարը, գերբի հավաքածումը կամ նրանցից ազատվելը, այդ նույն ձևով կատարվում է բոլոր ուղղումները և փոփոխությունները, վորոնք հետևում են ակտի արձանագրությունից։

## IV. ԱԿՏԻ ԳՐՔԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԼՐԱՑՈՒՄԸ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

36. Առաջին տողում կատարվում է ամուսնացողների ազգանունը, այսինքն, այն ազգանունը, վոր նրանք պիտի կրեն ամուսնությունից հետո։

ԾԱՆՈԹ. Ամուսնացողները կարող են կոչվել. ա) ընդհանուր մի ազգանունով փեսացուի կամ հարսնացուի, բ) կարող են մնալ յուրա-

քանչյուրը իրենց ազգանուններով (մինչամուսնական). իսկ միացումը յերկու ազգանունների անթույլատրելի չե։

37. Առաջին «ա», առաջին «բ» տողերում ցուցադրվում ե հարսնացուի և փեսացուի ազգանունները։

38. 2 տողում ցուցադրվում ե փեսացուի և հարսնացուի մինչամուսնական ազգանունները։

39. 2 տողում ճշտիվ ցուցադրվում ե փեսացուի և հարսնացուի ծննդյան ժամանակը առանձին-առանձին (այսինքն՝ տարին, թիվը և ամիսը), իսկ այդ տեղեկություններից հետո, ցուցադրվում ե յուրաքանչյուր ամուսնացողի հասակը։

40. Չորրորդ տողում ցուցադրվում ե ժամանակը ամուսնացողների, այսինքն, ցուցակագրության մոմենտում (յերբ կայանում ե ամուսնությունը)։

41. 5, 6, 7, 8 և 9 տողերում ընդգծվում ե յուրաքանչյուր ամուսնացողի բառերը. ա) վոր յերրորդ ամուսնության մեջ չեն մտնում, բ) ընտանեկան դրությունը, գ) ազգությունը, դ) սոցիալական դրությունը։

42. 10-րդ տողում տեղավորում են ամուսնացողների ճիշտ հասցեն, այսինքն, այն հասցեն, վորտեղ նրանք պիտի հետագայում ապրեն միասին։

43. 11-րդ տողում մտցնում են հատուկ դիմումները ամուսնացողների կողմից, վորոնց համար մատյանում առանձին տող չկա։ Դիմումները հետևյալն ե, որինակ՝ ամուսնացողների համաձայնությունը յերեխաների վերաբերմամբ, բացի դրանից, ամուսնացողների դիմումը, թե նրանք փաստացի ամուսնացած են այս ինչ, կամ այն ինչ ժամանակից, այդ բոլորը հաստատվում ե բժշկական վկայականներով, պատկերներով և նման փաստաթղթերով։

44. 12-րդ տողում ճշտիվ ցուցադրվում ե ամուսնացողները, վորոնք դրված են լինում ամեն մի ամուսնացողի։

45. 13-րդ տողում ամուսնացողները ստորագրում են իրենց միամուսնական ազգանուններով, բացի նրանցից ստորագրում են նույն վկաները։

## V. ԱԿՏԻ ԳՐՔԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԼՐԱՑՈՒՄԸ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ԽԱՓԱՆԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ

46. Առաջին ա) և առաջին բ) տողերում լրացվում ե նույն կարգով, ինչպես և ամուսնության գրության ժամանակ։



47. 2-րդ տողում մտցրվում են ապահարզանվողի ամուսնական ազգանունները, վոր նրանք կրելիս են յեղել մինչև ապահարզանի դիմում անելը։

48. 3-րդ տողում, 4 և 5 տողերում նույն կարգերով են լքցվում, ինչպես ամուսնության գրության ժամանակ։

49. 6-րդ տողը բաժանվում ե յերեք մասի. ա) ընդգծվում են ապահարզանվող ամուսինների յերեխաների թիվը, բ) ցուցադրում են յերեխաների անունները և հասակը, վորոնք ամուսինների համաձայնությամբ մնում են հոր կամ մոր մոտ, գ) ճշտիվ ցուցադրվում ե ծնողների համաձայնությունը յերեխաների նյութական ապահովության համար, այսինքն՝ թե վորը, նրանցից վորքան պիտի վճարի։

50. 7, 8 և 9 տողերում ընդգծվում ե համապատասխան անունները, ինչպես և ամուսնության ակտի գրումը։

51. 10 տողում ցուցադրվում ե ապահարզանների հասցեն, այսինքն, բնակչության վայրը ապահարզանից հետո։

52. 11 տողում անվանում են հատուկ նշաններ, ինչպես, որինակ, նրա մասին, վոր արձանագրությունը խափանելու խնդրում—մտցրված ե ժող. դատարանի վորոշումով։

53. 12 տողում ճշգրիտ կարդացվում ե վկայագիրը, վորոնք ներկայացնում են ամուսիննեը ապահարզանի ժամանակ հարկավոր ե ցույց տալ, թե ինչ հիմնարկության կողմից ե տրված այդ վկայագրերը, իրեն տարերով, որերով և ամիսներով։

54. 13 տողում գրվում ե ապահարզանվողների ստորագրությունը, վորոնք ի միջի այլոց ստորագրվում են իրենց ամուսնական ազգանուններով։

55. 14 տողում անվանում են նշանները, վկայագիր տալու համար և նույնպես բոլոր փոփոխությունների համար, վորոնք առաջանում են տվյալ արձանագրությունից։

## VI. ԱԿՏԻ ԳՐՔԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԼՐԱՑՈՒՄԸ ԱԶԳԱՆՈՒՆՆԵՐԻ և ԱՆՈՒՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

56. 1-ին տողում ցուցադրվում ե նոր անուն և ազգանուն, վորով ցանկանում են կոչվել դիմողները։

57. 2 և 2ա տողերում ցուցադրվում են նախկին անունը, նոր անունը և ազգանունը, վորով ցանկանում են կոչվել դիմողները։

58. 3 տողում ցուցադրվում ե ծննդյան տարին, թիվը և

ամիսը տվյալ անհատի, վորը փոխում ե իր անունը և ազգանունը, իսկ այդ տեղեկությունների բացակայության ժամանակ ցուցադրվում ե տարիքի թիվը։

59. Չորրորդ տողում ճշտիվ ցուցադրվում ե ծննդավայրը տվյալ անհատի, վորը ցանկանում ե փոխել անունը և ազգանունը, այսինքն՝ քաղաքը, նահանգը, շրջանը, գավառը և գյուղը։

60. 5 տողում վկայի խոսքերը ցուցադրվում ե դիմողի բնակվելու վայրը, մինչև 1917 թ. հոկտեմբեր և նրանից հետո հատուկ ցուցմունքներով յուրաքանչյուր բնակավայրից։

61. 6 և 7 տողում ընդգծվում ե ընտանեկան դրությունը և ունեցած յերեխաների թիվը։

62. 8 տողում ճշտիվ ցուցադրվում ե անունը, ազգանունը, փոխվող տարին և անչափահաս յերեխաների թիվը։

63. 9 տողում ընդգծվում ե դիմողի սոցիալական դրությունը։

64. 10 տողում ցուցադրվում ե դիմողի ճշտիվ հասցեն, այսինքն, նրա մշտական բնակավայրը։

65. 11 տողում անում ե այսպիսի նշաններ, ինչպես, որինակ, ուրիշ ամուսնու կողմից համաձայնության անչափահաս յերեխաների ազգանունը փոխել, դրա համար նա պիտի դիմե ԶԱԳՍ-ից բարձր որգանի։

66. 12 և 13 տողերը լրցվում են համաձայն ցուցադրված հասցեների, ինչպես և մնացած արձանագրություններում։

67. 14 տողում անվում ե առանձին նկատումներ, վկաներ և բոլոր փոփոխությունները տալու համար, վորոնք առաջանում են տվյալ ակտում արձանագրություններից հետո։ Յերեխայի ծագման դիմումների հերթական լրացումը։

68. Դիմումների արձանագրությունը տրվում ե յերկու նշաններով։ Մեկը նրանցից մնում ե ԶԱԳՍ-ի համապատասխան որգաններում, իսկ մյուսը, վորից պատասխան ստանալու կամ յերկու շաբաթ ժամանակ անցնելուց հետո, տրվում ե դիմող ձեռքը։

69. 1 տողում ցուցադրվում ե տեղեկությունը, վոր տալիս ե մայրը, հոր և իրեն մասին, այսինքն ցուցակագրվում են ազգանունները, անունը ինչպես հորը, այնպես ել և մորը։

70. 2 տողում գրվում են հոր և մոր հասակները։

71. 3 տողում ցուցադրվում են յերեխայի ծննդյան ժամանակը կամ յեթե նա դեռ չի ծնված, ապացուցադրվում ե հղիության ժամանակաշրջանը։



ԾԱՆՈԹ. Իսկ չծնված յերեխայի մասին տեղեկությունները անցնում են մանոյան, միայն բժշկական տեղեկագրի հիման վրա։

72. 4-րդ տողում ընդգծված յերեխայի հոր և մոր սոցիալական դրությունը։

73. 5 տողում ցուցադրվում ե հասցեն, այսինքն՝ քաղաք, նահանգ, գավառ և գյուղ, վորտեղ ներկա դեպքում ապրում են ճանաչված հայրը և մայրը։

74. 6 տողում ցուցադրվում են թիվը, ամիսը և տարին տրված դիմումի և նույնպես գրվում ե մոր ստորագրությունը։ Յերեխայի մոր կողմից ստորագրված դիմումը, լքցվում ե յայտարարիչ հարցաթղթերի մեջ, վորը գտնվում ե դիմումին կից և ուղարկվում յերեխայի հորը։

75. 3 տողում անվում ե նշան, նրա մասին, վոր յայտարարությունը ուղարկված ե հորը, իսկ հորից ստանալով կամ չըստանալով պատասխանը, դա վոչ մի նշանակություն չունի ԶԱԳՍ-ի համար։ Վերջինը նորից նույն տողում և յեթե անում ե համապատասխան նշաններ. հորը յերեխայի ճանաչելու նկատմամբ և նորից դիմումը ամրացնելով իր գործադիր որգանով տալիս ե մորը, նրա յերկրորդ նմուշը։

## VII. ՎՈՐԴԵԳՐՈՒԹՅԱՆ ԱԿՏԻ ԳՐՔԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԼՐԱՑՈՒՄԸ

76. Առաջին տողում գրվում ե վորդեգրվողի անունը, վորը տրվում ե նրան—վորդեգրողի կողմից։

77. 2 և 2ա տողերը լրցվում են համաձայն տրված հարցերին։

78. 3 տողը լրցվում ե համաձայն վորդեգրության կանոնների ճշգրիտ ծննդյան տարեթվով, ամսաթվով և որաթվով վորդեգրվողի։

79. 4 տողում ցուցադրվում ե վորդեգրողի ծննդավայրը· ճշգրիտ կերպով, այն ե՝ նահանգը, գավառը կամ շրջանը։

80. 5 տողում լրցվում ե ով լինելը (մարդ կամ կին)։

81. 6 տողում նշանակվում ե վորդեգրողների անունը, հոր անունը և ազգանունը, այսինքն, այն անհատի, վորոնք պիտի փոխարինեն նախկին ծնողներին։

82. 7 տողում ցուցադրվում ե վորդեգրողի իսկական ծնող-

ները, իսկ յեթե ծնողները անհայտ են, ցուցակագրվում են հոգաբարձումները, վորոնց հովանավորության տակ գտնվելիս է յեղել վորդեգրվողը (օրինակ, տողում գրված «հոր» փոխարեն, գրել «հոգաբարձու»։

83. 8 տողում ընդգծվում է ծնողների կամ հոգաբարձուների սոցիալական դրությունը։

84. 9 տողում լրացվում է այնպես, ինչպես 8-րդ։

85. 10 տողում ցուցադրվում է վորդեգրողի ճշգրիտ հասցեն (նահանգ, շրջան, գավառ և այլն)։

86. 11 տողում անվանում են հոգաբարձության հիմնարկությունը վորը վորոշում է վորդեգրությունը (համարը և թիվը)։

87. 12 տողում նշանակվում են ներկայացվող վկաները։

88. 13 տողում լինում են վորդեգրողների ստորագրությունները միայն այն դեպքում, յեթե նրանք բերում են հոգաբարձության հիմնարկության վորոշումը վորդեգրության վերաբերյալ։

89. Վկայականները պիտի լինեն գրված մաքուր, ջնջվող ծրագրներով առանց ջնջումների և կեխտերի։

90. Ամեն մի վկայականի վրա դնում է ԶԱԳՍ-ը համապատասխան որգանի շտամպը վորտեղից տրվում է տվյալ վկայականը։

91. Տված վկայականի վրա գրվում է արձանագրության ակտի համարը, այսինքն, այն համարը, վորով արձանագրությունը մտցնվում է մատյանների մեջ։

92. Բոլոր գրվելիք քվեարկությունների վրա պիտի լինի համապատասխան կնիքը։

93. Վկայականները պետք է լինեն ստորագրված պատասխանատու գործադիր անհատի կողմից, վորի ստորագրությունը պիտի ստացվի կամ գործավարի կամ թե մատենագրի հետ։

94. Գերբի հավաքումն վճարվում է համապատասխան գերբի նշաններով, վորոնք կտրվում են վկայելու այն տեղում, վորտեղ գրված է «գերբային հավաքածումից ազատվում է»։ Այն վկաները, վորոնք ազատվում են գերբային հավաքածումից, նրանք ոչ մի նշան չպետք է անեն, վորովհետև, դրա վերաբերյալ ցուցադրված է տեքստում։



95. «Առանձին նշանների» տողում ցուցադրվում է, թե ինչ տարկա է վերաբերվում տրված վկայականը (այն ժամանակ, յերբ նա ազատված է գերբային հավաքույթից)։ Ինչպես, օրինակ, «տրված է բացառապես դպրոցի, վոստիկանության և այլ հիմնարկությունների համար»․ բացի դրանից, այդ նույն տողում անում են և այլ նշաններ․ օրինակ քաղաքացիության փոփոխումը ամուսնության ժամանակ, հասակ և մահվան պատճառներ։

Ներքին Գործերի Կոմիսարի տեղապահ՝ ԺՈՒՐԲԱՆ

Նաչալնիկ միլիցիայի Ազերբայջանում ԻԲՐԱԳԻՄՈՎ

Ինսպեկտոր ՀԱՋԻԲԵԳԼԻ

ՀՀ Ազգային գրադարան
NL0221461

39.451